ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2013 թվականի N 566 - Ա

ք. Հրազդան

1987-1995 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 1212-Ն որոշման 7-րդ կետի դրույթների՝ ***որոշում եմ.***

1. Անցկացնել 1987-1995 թվականներին ծնված քաղաքացիների ձմեռային զորակոչը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Պետրոսյանին՝ 2013 թվականի դեկտեմբեր – 2014 թվականի հունվար ամիսներին անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զիվորական կոմիսարիատում հաշվառված արական սեռի այն քաղաքացիների ժամկետային զինվորական ծառայության ձմեռային զորակոչ, որոնց 18 տարին լրանում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնք պարտադիր զինվորական ծառայությունից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Ստեղծել զորակոչային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Պետրոսյան - նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, գնդապետ,

2) Վ. Սողոմոնյան - անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ

3) Ա. Հակոբյան - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

4) Ս. Սիմոնյան - անդամ, ավագ բժիշկ, <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության թերապևտ:

4. Հաստատել զորակոչիկների բժշկական քննություն անցկացնելու հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ս.Սիմոնյան	թերապևտ	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
2) Ա.Ղազարյան	վիրաբույժ	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
3) Ն.Գրիգորյան	ակնաբույժ	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
4) Հ.Կարապետյան	սրտաբան	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
5) Հ.Մկրտչյան	քիթ-կոկորդ-ականջ	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
6) Լ.Համբարձումյան	հոգեբույժ	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
7) Ս.Խաչատրյան	մաշկավեներաբան	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
8) Ն.Գալստյան	նյարդաբան	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
9) Ն. Գրիգորյան	բուժքույր	<<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն:

5. Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան և նյութական պայմանների ստուգման և քննման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Վ. Հովհաննիսյան - նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, մայոր,

2) Ա.Հակոբյան - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

3) Համայնքի ղեկավար - անդամ, ըստ բնակավայրի:

6. Բժշկական քննություններ անցկացնող հանձնաժողովի անդամների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման 1-ին կետի պահանջների համաձայն:

7. 2013 թվականի դեկտեմբեր – 2014 թվականի հունվար ամիսներին մարզի բժշկական կենտրոններում զորակոչային տարիքի անձանց բժշկական քննություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն:

8. <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռ.Սահակյանին՝

1) Ժամանակին կազմակերպել այն պատանիների հետազոտումը և բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են հետազոտման կամ բուժման,

2) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

9. Հանձնարարել համայնքների ղեկավարներին և ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչիկներին հավաքակայան ներկայացնելու գրաֆիկի և անհատական ծանուցագրերի, ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Պետրոսյանին՝ զինվորական կոմիսարիատի սպասարկման տարածքում գտնվող ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին ներգրավել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

11. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Իսրայելյանին՝ զորակոչային տեղամասերում ապահովել հասարակական կարգի պահպանությունը և կազմակերպել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումներն ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս:

12. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Ն. Եղիազարյանին՝ ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը զորակոչային տեղամասերից հանրապետական հավաքակայան:

13. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Պետրոսյանի վրա:

14. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ